Դիմորդը դիմում-հայտի հետ միասին ներկայացնում է՝

- **Տեղեկանք դպրոցից՝** ավարտական դասարանում սովորելու վերաբերյալ (լուսանկարով և տնօրենի կողմից հաստատված): Նախորդ տարիների շրջանավարտները ներկայացնում են ավարտական փաստաթուղթ՝ ատեստատ կամ դիպլոմ:
- **6 լուսանկար** (3 x 4 սմ չափսի):
- **Անձը հաստատող փաստաթուղթ** (անձնագիր, զինվորական գրքույկ, ծննդյան վկայական (բացակայության դեպքում՝ ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության կողմից տրվող անձը հաստատող ժամանակավոր փաստաթուղթ), փախստականի վկայական, ՀՀ հատուկ անձնագիր, կացության վկայական):
- **Կցագրման վկայական** կամ **զինվորական գրքույկ** և **տեղեկանք զինվորական կոմիսարիատից՝** վերջին 3 տարում ժամկետային զինվորական ծառայությունն անցած լինելու մասին:
- **Արտոնություններից օգտվող դիմորդները** ներկայացնում են համապատասխան փաստաթղթեր (1-ին կամ 2-րդ խմբի և մինչև 18 տարեկան մանկուց հաշմանդամության, ինչպես նաև զինծառայող ծնողի զոհվելու, առանց ծնողական խնամքի մնացած լինելու մասին /մինչև 23 տարեկան/):
- **2011թ. ավարտական միասնական քննությունների վկայագիր**:

<u>Ծանոթություն</u> *- Փաստաթղթերը հանձնելիս դիմորդը վճարում է* ***1500 դրամ՝ փաստաթղթերի ընդունման և ձևակերպման համար****, ինչպես նաև յուրաքանչյուր* ***ներբուհական քննության համար 1500-ական դրամ:***